

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԵՐԸ
(XIX դարի երկրորդ կես)

Հ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ

18-րդ դարի 80-ական թթ. սկսվել էին իտալական ազգային-ազատագրական շարժումները: Այն ուներ հակաֆեոդալական բնույթ և ուղղված էր օտար բռնակալության՝ Ավստրիական միապետության, որի լծի տակ էր գտնվում մասնատված ու կեղեքված Իտալիան, և երկրի հարավում իրենց տիրապետությունը հաստատած Բուրբոնների դեմ:

1859—1860 թթ. սկսվեց սարդինա-ֆրանս-ավստրիական պատերազմը, որի հետևանքով ազատագրվեց Իտալիայի մեծ մասը: Վեներիկի և Հռոմի ճահաճումները դեռևս մնում էին ավստրիական տիրապետության տակ, որոնք ավելի ուշ ազատագրվեցին: Իտալական ժողովրդի երկարատև պայքարն ի վերջո ավարտվեց հաղթանակով, և 1870 թ. սեպտեմբերի 20-ին արդեն Իտալիան վերամիավորվել էր մի պետության մեջ:

Իտալական ազգային-ազատագրական շարժումներն առաջադիմական բնույթ ունեին: Իտալական ժողովրդի քաղաքական նվիրական իղձի իրականացումը ոգևորիչ ներգործություն ունեցավ հայ գործիչների վրա. Ջուզեպպե Մաձձիցիի և Ջուզեպպե Գարիբալդիի օրինակով նրանք ջանում էին հայ ժողովրդին ոտքի հանել ընդդեմ թուրքական բռնակալության, որի ճիրաններում տառապում էր արևմտահայությունը: Եվ քանի որ հայ ժողովրդի համար ստեղծված դժնդակ պայմաններում հնարավոր չէր պարզորոշ ձևով քարձրացնել Հայաստանի ազատագրության հարցերը, ուստի նրանք դիմում էին Իտալիայի օրինակին, դրա վրա քեռեռելով հայերի ուշադրությունը:

Իտալական ազգային-ազատագրական շարժումներին իրենց դրական վերաբերմունքն են ցույց տվել հայ հասարակական-քաղաքական առաջադիմական քոլոր հոսանքների ներկայացուցիչները: Սակայն, ելնելով իրենց դասակարգային շահերից, նրանք տարբեր հայացքներ են դրսևորել:

Իտալիայի ազգային-ազատագրական շարժման և նրա ղեկավարների գնահատության հարցերում ճիշտ դիրքերի վրա են կանգնած եղել Միքայել Նալբանդյանը և նրա արևմտահայ համախոհները՝ Ստեփան Ոսկանյանը, Հարություն Սըվաճյանը, Սերոբե Թագվորյանը, Գրիգոր Զիրնկիրյանը, Մատթեոս Մամուրյանը, Արմենակ Հայկունին և ուրիշները: Նրանք որոշակիորեն իտալական ազգային-ազատագրական շարժումների ժամանակ նկատել են երկու հոսանք՝ բուրժուական լիբերալները՝ Իտալիայի վարչապետ կոմս Կավուրի և ազգային-դեմոկրատները՝ Ջուզեպպե Մաձձիցիի և Ջուզեպպե Գարիբալդիի գլխավորությամբ:

Հայ գործիչները աշխատել են ազգային-ազատագրական շարժումները զուգակցել իտալական շարժումների հետ և, դրանից խանդավառվելով, որոշակի դասեր են քաղել:

Միքայել Նալբանդյանը իտալական ազգային-ազատագրական շարժման ակնառուներն էր: Նալբանդյանը արտասահման գնալիս, մրրիկի պատճառով, Մարսել մտնելու փոխարեն հանգրվանում է Միցիլիա կղզում, ուր Մեսսինայի նավահանգստում հավաքվել էր երիտասարդների մի հսկա քաղմություն, որոնց կարմիր շապիկները վկայում էին, թե նրանք պատկանում են իտալական հերոսի՝ Գարիբալդու քանակին: Այդ վառվորուն երիտասարդների դեմքերին գծագրված էր ուրախություն և խղճի հանգստություն:

«Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Գարիբալդի» անլուռ աղաղակում է հասարակ ժողովուրդը. կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Վիկտոր-Էմմանուել, գոչում են քաղաքացիք, այսինքն միջնակարգ ժողովուրդը: Այս ուրախական բացականչությունքը, թեպետև հառաջանում են տարբեր սկզբունքներից, վերաբերությամբ դեպի Գարիբալդի և դեպի Վիկտոր-Էմմանուելը, բայց «Իտալիան» ամոքում է այս խոշոր տարբերությունը և այս պատճառով ևս հիշյալ երկու կացությունքը գործ տեսան և ամոթահար հաղթահարեցին ազնվական կացությունը, որ հերիքանալով անձնական դյուրությանը, նեապոլիտանյան նեղսիրտ ապստյուտիզմի ժա-

Շահակ, եթե չկարողացավ դեմ դնել ազգի միջից դուրս արձակված դիմագրավ գործության, գեթ մեծ տհաճությամբ լսեց և լսում է անլուելի «կեցցեները»¹:

Իտալական ազգային-ազատագրական շարժումների հենքի վրա էր ծնվում Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» հայտնի քանաստեղծությունը, որտեղ նա խորհում էր իր հայրենիքի վիճակի մասին.

**Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Յուր քաջ որդոց սուրբ արյունով,
Պիտի լիճի ազատված:**

**Եմենադն տեղ մահը մի է,
Ծառդ մի անգամ պիտ մեռնի.
Բայց երանի՞, որ յուր ազգի
Ազատության կը զոհվի²:**

Այս քանաստեղծությունը Նալբանդյանը գրում էր այն ժամանակ (1859 թ., Մայնի Ֆրանկֆուրտ), երբ Ջուզեպպե Գարիբալդին սկսել էր իր հաղթարշավը Լոմբարդիայում: Հայ ժողովրդի ազատագրական պայքարին, Նալբանդյանի կարծիքով, տղամարդկանց հետ համահավասար պետք է մասնակցեին նաև հայ առաքինի կանայք: Նրանց հայրենասիրական տենչերի բորբոքման ճպատակով է հենց նա քերում 5-րդ դարում Եղիշեի գովերգած կանանց օրինակը:

**... Բայց մեր կանայք... ո՞ր Եղիշե,
Ո՞ր մեր տիկնայք փափկասուն:**

**Ո՞հ... արտասուք ինձ խեղդում եմ,
Այլ չեմ կարող բան խոսել,
Զե՛... թշվառ չէ Իտալիան,
Եթե կանայք այսպես են (Ռ. 1, էջ 100):**

Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» քանաստեղծության այս վերջին տողերը հիշեցնում են նրա այն նամակը, որն Նեապոլից ուղարկվել էր Հարություն Սըվաճյանին. «Զե՛մ նախանձում Իտալիայի ազատության, դորս հակառակ առ ի սրտե ուրախ եմ, սակայն տեսնելով նորս ազատությունը և իմ ազգի տկարությունը, կրծում է սիրտս և այրում է հոգիս»: Եվ նորից ու նորից նրա աչքերի առջևով անցնում է Հայաստանի տարաբախտ վիճակը, և այդ մասին գրում էր. «Էտնան և Վեզուվի՛ն ծխում են. Աթաբասի հին վուլկանի մեջ միթե՞ կրակ կմնա իսպառ... մահաբեր մտածություն» (Ռ. 4, Եր., 1949, էջ 86):

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի գործում Մ. Նալբանդյանը երբեք չէր ընկերվում և իր հույսը կապում էր հայ երիտասարդության հետ, որով և պայմանավորված էր ազգի ապագան: «Թողե՛ք մեռելներին թաղել յուրյանց մեռելները, նոցա արևը մտած է. իսկ դուք կենդանի եք և ապագայի արշալույսը ձեր գլխի վերս է բացվում: Ձեր սակավթիվ լիճելը, համեմատելով պետքերի շատության, թո՛ղ չվհաստեցնե՛ն ձեզ, այն մարդը, որ զգում է յուր անձը կենդանի, պիտի հարի ձեզ, որովհետև կյանքի հոսանքը միայն մի ընթացք ունի— դեպի հոսաջ» (Ռ. 4, Եր., 1988, էջ 85):

Բոլոր ճնշված ազգերի ազատության և անկախության սրբազան իրավունքի ջերմ պաշտպանն ու ջատագովը հայ ժողովրդի ազատագրական պայքարը ազգային նեղ շերտ-ջանակներից դուրս էր քերում միջազգային ասպարեզ, դրանով իսկ ծառայում մեր ժողովրդի ինտերնացիոնալ կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը: Մ. Նալբանդյանը համոզված էր, որ հայ ժողովուրդը կազատագրվի թուրքական բռնակալական ճիրաններից, եթե ընթանա Մաձձիմիի և Գարիբալդիի գծած հեղափոխական ուղիով: Արդյո՞ք պատահական էր, որ մի ամբաստանագրի մեջ Մ. Նալբանդյանին մեղադրել են այն հարցում, որ նա ուզեցել է հայ ժողովրդին տանել Գարիբալդիի և լեհերի ազատագրման ուղիով, ազատություն սերմանել հայ ժողովրդի մեջ և ազատագրել Հայաստանը: Մ. Նալբանդյանը պշխատում էր իր արևմտահայ համախոհների՝ Սեդրե Թագվորյանի, Հարություն Սըվաճյանի միջոցով անձամբ կապեր հաստատել ժամանակի առաջադեմ իտալական ազգային-ազատագրական շարժումների ղեկավարներ Ջ. Գարիբալդիի և Ջ. Մաձձիմիի հետ. այդ նրան հաջողվել է:

Հայ ազատագրական շարժման նշանավոր դեմքերից մեկը՝ Ստեփան Ոսկանյանը ևս,

¹ Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1949, հ. 4, էջ 88:

² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, վեց հատորով, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 107—108: Այսուհետև քննարկում հատորը և էջը:

որին Նալբանդյանը զնահատում էր որպէս «քանաստեղծական ճոխ քանքար» ունեցող մի անհատի, իտալական դէպքերը ծառայեցրել է իր ժողովրդի դատի պաշտպանությանը: Իտալիայի մղած ազատագրական շարժումը, իրոք, լավագույն առիթ էր հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրները թելուզ որոշ չափով լուսարանելու համար:

Ստ. Ոսկանյանը իր հրատարակած «Արևմուտք» հանդեսի համարներից մեկում խոստովանում է, որ երբ սկսվեց իտալական պատերազմը Ավստրիայի դեմ, հանդեսը ֆրանսիական կառավարությունից թույլտվություն խնդրեց քացելու քաղաքական մասը լուրերի քածինը. «Պատերազմի տիեզերքուր շփոթը ու ռազմական շտապյունը միայն աստիպեցին զմեզ մայրաքաղաքիս (իմա Փարիզի— Հ. Ա.) օրագիրներու արեւագանք ըլլալ և մեր ցեթեքցողներու ուշադրությունը դեպի Դոպիա տանիլ: Հազիվ թե մեկ երկու հոգի հասկցան, թե ինչ ըսել ուզինք և ինչ ըսինք: Հայ ժողովուրդին վիճակը, չէր ներեր, որ ընդհանուր քաղաքականության վրա գոնինք, և մեր արտոնությունը կատիպեր, որ թարգմանենք և ոչ թե մեկնությունը տանք դէպքերուն: Եթե երբեմն երկու թարգմանություն մեջ տեղը ազատաբույր ակնարկություն մը սպրդեցավ կամ Ավստրիայի դեմ սաստիկ բառեր տեսնվեցան, պատճառը մեր անբուժելի հայրենասիրության պետք է որ տրվի»³:

Եվ վերջապէս Ստ. Ոսկանյանը նկարագրում է առաջին հայ գաղթադիակականներից մեկի՝ Գիս կամ Գիշ գորապետի գործունեությունը, որը 1850—1860 թթ. հունգարացիների հետ կամավոր կերպով մեկնել է ճակատ՝ կռվելու Իտալիայի ազատության համար: «Օրագիր մը մեկ քանի երևելի Մաճառներուն Դոպիա երթալը կը հրատարակէ,— գրում է նա,— որոնց մեջ Գիս կամ Գիշ գորապետ մ'ալ կը հիշվի: Արդոյ՞ք այս անձը ազգակցություն ունի այն քաջ Հայկազն գորապետին հետ, որ Մաճառտանի կռվին (հեղինակը նկատի ունի 1848—1849 թթ. հունգարական հեղափոխական դէպքերը— Հ. Ա.) ատեն հռչակավոր եղաւ և որ ազատության սիրով բորբոքելով Ավստրիայի դեմ զինվեցավ: Պատերազմն ետև Գիշ սպանվեցավ զնրամահ, և իր անհուն հարստությունը տերության գանձը մտավ: Ավստրիան Հայկազն քաջին արյունը ծծելով գոհ չեղավ, գանձերն ալ հափշտակեց»⁴: Ուրիշ որևիցէ փաստ չի պահպանվել Գիշ գորապետի մասին: Բայց մի բան պարզ է, որ այս անձը վերին դասի՝ ազնվականության, զինվորականության ներկայացուցիչ էր: Հնարավոր է, որ այս Հայկազն Գիշը սերված լիներ 1848—1849 թթ. հունգարական ազատագրական կռիվների մասնակից Քիշ-Պատիկյան տոհմից, որը հունգարական հեղափոխության պարտությունից հետո մահվան դատապարտվեց:

Ստ. Ոսկանյանը անսքող համակրանք է տածում իտալական հայրենասերների արդար գործի նկատմամբ: «Ջիդալիա կը սիրեինք, միշտ սիրեր ենք,— գրում է նա,— Դոպիա իր արյունաթաթաղ ճակտով միշտ երևած է մեզ իբրև կենդանի պատկեր նկուն ազգերու:

Հայաստանի ավերարայաց վիճակը իր զավակներու վրա պարտք կը դնէ թշվառ ժողովուրդներու կարեկցի: Նկուն ազգերը մյուս ազգերու համակրությանը միայն կրնան վերականգնի: Ո՛վ գիտե գուցե օր մը Դոպիայի զավակ մը մեր գերության և թշվառության դեմ բողոքե, ինչպէս մենք իրեն համար բողոքելու գորությունը ունեցանք»⁵: Նա գտնում էր, որ հայերը այս հարցում օրինակ պետք է առնեն ուրիշ ազգերից և մասնավորապէս իտալացիներից: Ստ. Ոսկանյանը իտալական ազատագրական շարժման օրինակով աշխատում էր թարմ ազդակներ հաղորդել հայ ժողովրդին:

Հարություն Սըվաճյանը XIX դարի 50—80-ական թթ. հայ հասարակական մտքի ամենապուստիկ դեմքերից մեկն էր: Նա Պոլսում հրատարակում էր ժամանակի առաջավոր թերթերից մեկը՝ «Մեղուն»: Նա իր առջև խնդիր էր դրել այն ծառայեցնել իր ժողովրդի լուսավորության ու առաջադիմության գործին: Սըվաճյանը 1860 թ. «Մեղվում» տպագրում է «Կարիպալտի» վերնագրով հոդվածը, որը թարգմանել էր «Ինչի՞ նյութ» անգլիական լրագրից: «Ատենէ մ'ի վեր,— գրում էր հոդվածագիրը,— ամուն մը կը հեղեղե ամեն բերան, և աշխարհ ասի ի բերան կը նայի այն անվան տիրոջն ետևեն. զարմանքով կը դիտե անոր ամեն մեկ շարժվածքը, զմայլելով ականջ կը դնե անոր խոսքերուն և սքանչանալով կը պատմե անոր անշահախնդիր առանձնությունը, ուր ծածկել կը ցանկանա ինքզինքը՝ իր փրկյալներուն իրեն ընծայելու հարգանքը իրեն ծանրություն մը համարելով»⁶:

Հիշենք, թե ինչի մասին է ակնարկված հոդվածում: 1860 թ. իտալական ազգային-ազատագրական շարժման թեժ պահին, հանկարծ Վիկտոր-Էմմանուել Երկրորդը և Իտալիայի վարչապետ Կավուրը աշխատեցին Գաղթադիակի հետացնել քաղաքական ասպարեզից: Իտալական ժողովրդի հերոս զավակը թողեց ռազմի դաշտը և հետացավ Կապրեոս

³ «Արևմուտք», 1850, № 16, էջ 121:

⁴ Նույն տեղում, № 12, էջ 85:

⁵ Նույն տեղում, 1859, № 17, էջ 132:

⁶ «Մեղու», 1860, № 116:

կղզի: Իտալական ժողովրդի համար այս փաստը մնաց առեղծված: Նրանք հետապնդում էին քաղաքական նպատակ. նախ՝ հարաբերությունները չվատթարացնել իր դաճակցի՝ Ֆրանսիայի հետ և ապա ժամանակ շահել ուժերը վերախմբավորելու համար: Այնուհետև հողվածագիրը գրում է «Աստուծո առաքյալի»՝ Գարիբալդիի մասին. «Կարիպալտին Իտալիան ազատեց.

Կարիպալտին փոխարինություն մը չ'ընդունեց:

Ահա այս երկու հատկություններն են, որ աշխարհիս սերն անոր վրա քաշեցին և պսօր առհասարակ ամեն մարդ պվելի ակնածությամբ անոր անունն ի բերան կտանե, քան թե աշխարհիս են մեծ կայսերաց անունը»⁷: Ոչ բոլոր պատմական հերոսներն են այսպիսի առաքինություններով օժտված: Եվ հետո շարունակում է. «Տա՛ր երկինք, որ ամեն ընկճյալ ազգերու համար ալ այսպիսի անձինք հառնեին և աշխարհիս խաղաղությունը հաստատ հիմանց վրա դրվեր»⁸: Ովքե՛ր էին ըստ Սրվաճյանի «ընկճյալ ազգերը»: Նա նկատու ուներ հայ ժողովրդին: Նրա ցանկությունն էր նման առաքինի անհատներ տեսնել իր ժողովրդի մեջ: Ինչպես ժամանակին Նալբանդյանը, Սրվաճյանը ևս հույսը կապում էր նոր սերնդի հետ: «Կարիպալտին,— գրված է հողվածում,— նոր ժամանակիս դյուցազնը, նոր սերունդին սիրտը թնդացուց և նորահասակ Մեղուն նախանձեցավ անոր և անոր փրկյալներուն քաղդին վրա՝ և ահա հոս կը դնե անոր փառքն պվելցնող գովեստի հողված մը...»⁹: «Մեղվում» հողվածը տպագրվեց 1860 թ. նոյեմբերի 20-ին, այն օրը, երբ հեղափոխական դեմոկրատ Մ. Նալբանդյանը Հնդկաստան ուղևորվելու ճանապարհին հասավ Կ. Պոլիս, որտեղ մնաց մեկ ամիս: Սա ևս վկայում է իտալական հարցում Սրվաճյանի և Նալբանդյանի համագործակցության մասին:

Շ. Սրվաճյանը «Մեղվի» 1862 թ. մարտի 20-ի համարում գետեղում է Գարիբալդու նամակը՝ ուղղված Պալերմոյի համալսարանի սաներին: Գարիբալդին նամակում զգուշացնում էր, որ ժամանակից շուտ չվատահեն պետական պաշտոնյաներին, որոնք «ազատասիրի կերպարանք են առել»:

Շ. Սրվաճյանը, օգտագործելով Գարիբալդիի նամակը, գտնում էր, որ «Աշխարհիս այս տեսակ դեպքերը զարմանալի նմանություն մը ունին»¹⁰: Այս նամակը կարծես թե գուգադիպում է Սամաթիո հայ պատանիների գործունեությանը, նրանց միջև նմանություն է գտնում և Գարիբալդիի նույն նամակը ուղղում է Սամաթիո Սահալյան սաների ընկերությանը, նրանց զգուշացնում ազգի խաղաղությունը վրդովող և առաջադիմությանը խոչընդոտող «ազգին խավարաշքջիկ խուսին»։ Չվատահել նրանց՝ խորհուրդ էր տալիս Սրվաճյանը պատանիներին:

Սրվաճյանը դրվատանքի խոսքեր է ուղղել ոչ միայն Գարիբալդիի և Մաձձինիի, այլև չափավոր լիբերալ բուրժուական ուղղության ներկայացուցիչ Կավուրի հասցեին: Այս կապակցությամբ նա «Մեղվի» երեք համարներում տպագրում է լիբերալ պատմաբան Ղազարոս Հովակիմյանի «Քավուր» խորագրով աշխատությունը, որտեղ գովեստի խոսքեր էր ուղղում Կավուրի մասին:

Նալբանդյանը անձամբ Մաձձինիին նամակ է ուղղել, որը մնում է անհայտ¹¹: Բայց մեզ հայտնի է Մ. Նալբանդյանի մեկ ուրիշ նամակը՝ ուղղված Սերոբե Փազվորյանին, ուր նա դժգոհում էր Պոլսի արևմտահայ «համախոհների թուլությունից ու դանդաղկոտությունից», որոնք նամակը Մաձձինիին դեռևս չեն հանձնել: «Պարոն Մարտիրոսին (Մաձձինիին— Շ. Ա.),— գրում է Ս. Փազվորյանը Մ. Նալբանդյանին,— նամակը մինչև հիմա չի տալու կնեղանաս, բայց կաղաչեմ միտ դիք ընելիքներուս պաղ արյունով:

Քանի որ դու մեկներ ես քաղաքեն (Պոլսեն— Շ. Ա.), կաշխատես, որ իրոք ստանանք ինչ որ պարոն Մարտիրոսին ըսեր ես թե ունիմք, որպեսզի խրկած նամակը իր մարդուն կարենանք համարձակ տալ. բայց իզուր, ազգին մեջ եղած անվերջանալի խընդիրները և այն մարդիկներուն գործքերը, որոնց վրա քանի մի ամիս առաջ վստահություն ունեինք և այժմ չունիմք, այսպիսի կրճիմները կըսեմ, անհնարին կվհատեցնեն զմեզ: Հիմա խորհրդածե՛. չունենալով այս քաղքիս մեջ սեղանավոր մը, ունիմք ըսելը թող որ զիս քրիթիկ կացության մեջ կդնե, այլև մեր ընկերները չեն ներեր, որ այդպիսի բան մը հաղորդեմ այն մարդուն, որ բոլոր ընկերության վարակումիս կրնա վնասել. ես, ինձի համար, թու ըրած տնօրինությանդ վրա բոլորովին ապահով եմ, և եթե լավ մտածելն հետո

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, № 156, էջ 59:

¹¹ Ա. Ինճիլյան, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Եր., 1954, էջ 201:

որոշես, որ նամակը պիտի տալ իր տեղը, եւ անկասկածաբար կուտամ. մտածեւ և իմացուր ինձի: Աշխատեցա, որ (Հոթֆելտ) եղբարց լոծ ունենանք հոս և հրամանը առինք, քանի մը ասուներն լոծը պիտի բանամք: Այս լոծին անունն է Հայկ կամ Օրիոն: Մնամ սիրելիությանդ՝ Ս. Թ.»¹²: Այս նամակում Ս. Թազվորյանը, խոսելով իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավար Մաձձիհիի մասին, շոշափում է նաև հարցեր, որոնք անիջապես կապված են հայ ազգային-ազատագրական շարժումների, «Հայկ կամ Օրիոն» գաղտնի կազմակերպություն ստեղծելու, Նալբանդյանի արևմտահայ թարեկամների և այլնի մասին:

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը այն կարծիքն է հայտնել, որ Ս. Թազվորյանը դեռևս Մ. Նալբանդյանից էլ առաջ գործնական կապեր է հաստատել իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավարների և հատկապես Ջ. Մաձձիհիի և Ջ. Գարիբալդիի հետ¹³:

Ս. Թազվորյանի նամակի առթիվ Ս. Պետերբուրգի քննիչ հանձնաժողովի պատասխաններից մեկում (մայիս 14/28 1862, Կ. Պոլիս) ասվում է, որ արևմտահայերը նույնիսկ աշխատել են հնարավորություն ստեղծել «Ֆրանսիայի կամ Իտալիայի հպատակություն» ընդունելու, որպեսզի այդ ճանապարհով ապահովեն իրենց Կոստանդնուպոլսում¹⁴ և ազատագրվեն թուրքական տիրապետությունից, որտեղ արյունաքամ էին լինում: Այս գործում նրանց աջակցել է իտալահպատակ, Խաչատրյան ազգանունով մեկը, որը ճանաչում էր շատ իտալացիների, որոնց թվում և Մաձձիհիին: Նա փորձելու էր այդ գործը գլուխ քերել, երբ Լոնդոն գնար¹⁵: Ինչպես երևում է, իտալահպատակության ընդունումը վաղուց էր ծրագրվում: Արևմտահայերը ձգտում էին թուրքական բռնապետությունից ազատագրվելու ուղիներ գտնել. այդ որոնումների ընթացքում էլ 19-րդ դարի 50—60-ական թթ. ապսպիներին իտալական ազգային-ազատագրական շարժումներին:

Գրիգոր Չիլիակիրյանը Մ. Նալբանդյանի արևմտահայ հետևորդներից էր: Նա ևս, մյուս առաջադեմ գործիչների նման համակրում էր իտալական ազգային-ազատագրական շարժմանը, և նրա հրատարակած «Ծաղիկ» պարբերականը միշտ դասեր էր քաղում այդ շարժումից: «Ծաղիկը» հայության շրջանում տարածում էր իտալական մեծերի՝ Գարիբալդիի, Վիկտոր Էմմանուել Երկրորդի և Կալվորի համերաշխության օրինակը: Հանդեսը գրում էր. «Օրինակ՝ ըլլան մեզ Իտալիայի ազատության այն երեք երևելի շահատակները, որք հայրենիքի անկախության համար առաթուր կոխեցին անձնական կիրքը, մոռցան ատկությունը, և միաբանության ու սիրո համբույր տվին իրարու»¹⁶: Բացի այդ, «Ծաղիկ» հանդեսում տպագրվում էր Ֆրանսիայի մեծ գրող Վիկտոր Հյուգոյի նամակը՝ ուղղված Ջուզեպպե Գարիբալդուն, և վերջինիս պատասխանը գրողին: Գարիբալդու պատասխանն անակը «ազատության առաքյալին»՝ բնագրից թարգմանել էր Գրիգոր Չիլիակիրյանը: «Ձեր տարագրության մեջ Ձեզի այցելություն մ'ընելս ինձի համար ոչ թե փափաք՝ այլ պարտավորություն մ'էր: Բայց շատ պարագաներ զիս կարգելուն այս պարտավորությունը կատարելու:

Կը հուսամ, որ պիտի հասկնաք թե՛ ՚ի մոտուստ ինչպես նաև ՚ի հեռուստ՝ երբեք բաժանված չեմ թե՛ Ձեզմե և թե՛ այն դատեն գոր դուք կը պաշտպանեք:

Միշտ Ձեր Հ. Կարիպալտի»¹⁷:

Երկու տարագիրներ՝ Գարիբալդին և Հյուգոն (վերջինս 1852 թվականից արտաքսվել էր իր հայրենիքից, երբ Ֆրանսիայում հաստատվեց Նապոլեոն Երրորդի ռազմական դիկտատուրան) լավ էին հասկանում միմյանց: Գարիբալդին, իր հերթին, լավ էր ըմբռնել Հյուգոյի ծանր վիճակը, հայրենիքից արտաքսված լինելու նրա տառապանքը, ընդունել էր նրան այցելելու հրավերը, սակայն հանգամանքները թույլ չէին տվել:

Ջուր չէ, որ Հյուգոն մի առիթով գրել է. «Թոսել Գարիբալդու մասին՝ ասել է թե քացել 19-րդ դարի պատմության ամենափայլուն էջերից մեկը»: Իսկապես, անցյալ դարի Իտալիայի պատմությունն անհնար է պատկերացնել առանց իտալական ազատագրական շարժումների և նրա հերոս ղեկավարի:

Մատթեոս Մամուրյանի հրատարակած «Արևելյան մամուլը» արձագանքել է իտալական ազատագրական շարժմանը, մասնավորապես Գարիբալդիի մահվան առիթով: Այդ կապակցությամբ «Արևելյան մամուլի» հինգ համարներում հրատարակվում է նրան նվիր-

¹² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, Երևան, 1940, էջ 438—440:

¹³ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Եր., 1955, գ. 1, էջ 502:

¹⁴ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, Եր., 1949, հ. 3, էջ 439:

¹⁵ Նույն տեղում, էջ 407:

¹⁶ «Ծաղիկ», Ջմյուռնիս, 1861, յուլիս 10, № 2, էջ 12:

¹⁷ Նույն տեղում, 1864, № 82, մայիս 10, էջ 157:

ված մի ընդարձակ հողվածաշար¹⁵: Այն քաղված է Ժ. Քեմփի գրած Գարիբալդիի կենսագրությունից: Հողվածաշարի հեղինակը օբյեկտիվորեն ներկայացնում է նրա ծառայությունները իր հայրենիքին: Մատթեոս Մամուրյանին հավանաբար դուր է եկել հողվածաշարը, և նա, առանց փոփոխելու, որոշ կրճատումներով, արտատպել է «Արևելյան մամուլում»: Ահա թե ինչ ձևով է հեղինակը ներկայացնում Գարիբալդուն. «մի միայն մեկ դյուցազն կա Եվրոպա. երկու հատ չեն գտներ. այս դյուցազնը Կարիբալդին է: Հողվածագիրը ներկայացնում է միաժամանակ Գարիբալդիի թույլ կողմերը՝ ճաղաքականության հարցերում «խորագրություն» չուներ և այլն:

Կենսագրական այս ընդարձակ հողվածաշարի տպագրումը նախ արտացոլում է Մ. Մամուրյանի դրսևյան վերաբերմունքը իտալական ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Նման վերաբերմունքը և դրա նման դրսևորումը ուներ իր նպատակը՝ ընթերցողների լայն շրջանների մանրթացնել ու պատմել իտալական «դյուցազնի»՝ Գարիբալդիի կյանքի և սխրագործությունների մասին և դրանով իսկ իր ժողովրդին հաղորդակից դարձնել իտալական շարժման գաղափարներին:

1857—1858 թվականներին Կ. Պոլսում հրատարակվում էր «Մուսայթ Մասյաց» հանդեսը, որի խմբագիրն էր Արմենակ Հայկունին: Վերջինս Միքայել Նալբանդյանի գաղափարական համախոհներից մեկն էր: Նա հայերին կոչ էր անում հետևել իտալացիներին և արյուն թափելով հասնել իրենց երազած ազատությանը:

Արմենակ Հայկունին գրել է մի ողբերգություն, որը վերնագրել էր «Վաստ սիրտ կամ առկալի գիշեր մը Սիրաքուզայի մեջ», որտեղ գուշակում էր Իտալիայի լուսավոր ապագան, որը շատ հեռու չէր.

**Այսպիսի արիությունք
Թող մենք ապրինք շարունակ,
Եվ մեր երկիրն Իտալիո
Հարազատ ըլլանք զապակ:
Թող պարծենա Իտալիա,
Մինչև Աշխարհս վերջանա¹⁶:**

Այդ, Ա. Հայկունին հայ ազատագրական շարժումները միայն ինքնակա չէր տեսնում, այլ իր միջազգային ոլորտում, այդ թվում և իտալական կապերի մեջ:

Մեծ հայրենասեր, լուսավորիչ Ստեփանոս Նազարյանը իր հրատարակած «Հյուսիսափայլ» հանդեսի էջերում մեծ տեղ էր հատկացնում իտալական շարժումներին, ոգևորվում իտալացի հայրենասերների գործունեությամբ, աշխատում էր նրանց վրաս հուրը բորբոքել հայության շրջանում: «Հյուսիսափայլ» 1861 թ. մի քանի համարներում տպագրվում էր նուս նշանավոր հրապարակախոս Եվգենի Կարնովիչի «Գարիբալդիի կյանքը» ակնարկաշարը: Այն «Ստվերմենիկ» ամսագրից թարգմանել էր Մարտիրոս Հրայրա Սիտնյանը: Վերջինս պատասխանելով այն ժամանակվա Պետերբուրգի համալսարանի ուսանող Թուրքեն Զալալյանցի նամակին՝ տեղեկացնում էր, որ այդ «երևելի մարդու»՝ Գարիբալդիի կենսագրությունը հարկավոր է տարածել հայության շրջանում:

Նազարյանը տպագրել է նաև «Կոմս Կամիլլոս Կավուր» վերնագրով մանախոսականը, որի մեջ ևս շատ բարձր է գնահատում իտալական ազատագրական շարժման չափավոր լիբերալ ուղղության ներկայացուցչին՝ Կավուրին, Իտալիայի միության ստեղծման գործում: Կավուրի մահը նա համարում էր աղետ իտալացիների համար և գրում էր «Վիկտոր-Վեմանունելը, Գարիբալդին, Բատուացին, Ֆարինին, Բիքազոլին, Ֆանտին և Ջիալդինին, պիսի այժմ ժողովեն յուրյանց բոլոր ուժը և կարողությունը, որպեսզի այն գեղեցիկ, քայց կիսով չափ ամրացուցած շինվածը միության Իտալիայի վաղածամանակյա փշոր փշոր շինի»²⁰: Ստեփանոս Նազարյանը Կավուրին համարում էր Եվրոպայի խոշորագույն քաղաքական գործիչներից մեկը, որն, անշուշտ, չափազանցված է: Այս հարցում Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի հայացքները իրարից տարբերվում էին: Տվյալ դեպքում Ստ. Նազարյանին չէր հետաքրքրում, թե Կավուրը կամ Մաձձինին ովքեր են, արդյոք նրանք իրավունք ունեն դրվելու Գարիբալդիի կողքին: Նրան հետաքրքրում էր միայն մի հարց. այդ անհատները նպաստել են իտալական ազգային-ազատագրական շարժման գործին:

Ջուզեպպե Գարիբալդիի մահվան առիթով Գրիգոր Արծրունու «Մշակ» ընկալման

¹⁵ «Արևելյան մամուլ», 1862, Չմյունխա, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համարներում:

¹⁶ «Մուսայթ Մասյաց», Կ. Պոլիս, 1858, տետր Բ, էջ 66:

²⁰ «Հյուսիսափայլ», 1861, հունիս, № 6, էջ 504:

հողված-մահախոսական է տպագրում նրա մասին, նրա կատարած գործը համարելով ժամանակի խոշորագույն իրադարձություններից մեկը՝ նա Իտալիան միավորեց: «Է՛ն՛ն՛ն ժարդ լսել է իտալական ժողովրդական հերոսի մասին,— գրում էր «Մշակը»,— քայց ո՞վ որ չէ եղել Իտալիայում, չէ կարող երևակայել իրան որքան մեծ է իր հայրենիքում Գաբրիելի ժողովրդականությունը»²¹:

Հետաքրքիր է, որ Գրիգոր Արծրունին 1867 թ. Ժճևում գտնված ժամանակ անձամբ, մոտիկից տեսել էր նրան ճառ արտասանելիս: Նա հայ իրականությունում Գաբրիելյու գործի ջերմ պաշտպաններից մեկն էր:

19-րդ դարի 50—80-ական թթ. հայ ազգային-պահպանողական ուղղության ներկայացուցիչները ևս ձգտում էին հայ ժողովրդի ազատագրությանը: Սակայն այս հարցում նրանք ընտրում էին իրենց ինքնուրույն ուղին: Ազատագրումը նրանց կարծիքով պետք է տեղի ունենար խաղաղ ճանապարհով, առանց զրգռելու թուրքական բռնակալությանը, քա՛նի որ դա կարող էր մեծ զոհերի պատճառ դառնալ:

«Մեղու Հայաստանին» գտնում էր, որ արևմտահայերը, որոնք ապրում են թուրքական բռնապետության պայմաններում, պետք է գործեն խոհեմորեն, չզրգռեն բռնապետներին, քանի որ դրանց կտուժեն բոլորը, և համբերատար սպասեն այնքան, մինչև որ գա ազատագրման պահը²²: «Մեղու Հայաստանի» կարծիքով ազգային-ազատագրության հարցը չէր կարելի օտարներից կուրորեն ընդօրինակել կամ փոխ առնել նրանց զաղափարները, այլ պետք է ընտրել իրենց ուղին: «Ինչպես որ իրականապես մեր Մաձիճիները, Կավորներն ու Գաբրիելիները այդպիսիք չեն,— գրում էր թերթը,— այսպես էլ Հայ ազգը իտալացի չէ: Այլ իրականապես մեր այդ քաղաքական գործիչները Գրիգոր, Մարկոս ու Կիրակոսներ, Թաթևուներ և Հակոբներ են, նույնպես էլ մեր ազգը Հայ է, յուր այն վիճակով, որ նրան որոշել է նորա պատմությունը մինչև ցայժմ»²³:

Այդուհանդերձ պետք է նկատել, որ իրականությանը ավելի մոտ դուրս եկան հայ ազգային-պահպանողականները և մասնավորապես «Մեղու Հայաստանին»:

19-րդ դարի երկրորդ կեսին հայ ազգային պահպանողականների մի մասը՝ Կարապետ Ծախնազարյան, Մաղաքիա Օրմանյան, Գաբրիել Պատկանյան, Կարապետ Եզյան, Պետրոս Սիմոնյան և ուրիշներ, առաջ էին քաշում ազգի պահպանման, գոյատևման և ուժեղացման չեմբարկվելու հարցը: Նրանք դրա դեմ պայքարելու համար մեծ նշանակություն էին տալիս հայկական ազգային դպրոցների հիմնմանը: Այսպես օրինակ, անցյալ դարի 80-ականների հայ պահպանողականների աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը՝ Կարապետ Եզյանը Պետերբուրգի իր թնակարանում հիմնեց մի պանսիոն, որտեղ ուսանում էին թվով 10—12 հայ պատանիներ: Այստեղ լուրջ հիմքերի վրա էր դրված ոչ միայն մայրենի լեզվի և գրականության, այլև մյուս օտար լեզուների ուսուցումը: Նրանք պանսիոնում հայ գրականություն առաքելայի այս կամ այն պրոբլեմի վերաբերյալ գրում էին ռեֆերատներ և ընթերցում բոլորի ներկայությամբ: Միաժամանակ նրանք դաստիարակվում էին հայեցի ոգով: «1864 թ. կարդացվում էին Արևմտահայաստանից և այլ վայրերից ստացվող նամակներ, որոնք կոնկրետ նյութ էին մատակարարում հայկական այս կամ այն հատվածի քաղաքական կամ տնտեսական դրությանն անդրադառնալու համար»²⁴:

Հայ ազգային-պահպանողականների համար կարևոր էր եկեղեցու և կրոնի դերը հայապահպանման գործում: Նրանք հայ եկեղեցին և կրոնը դիտում էին որպես ժողովրդի ազգապահպանման և համախմբման միջոց: Դա քաջատրվում էր այն բանով, որ դարեր շարունակ հայ ժողովուրդը, կորցնելով իր պետականությունը, կարողացել էր ապավինել եկեղեցուն, չճուլվելով իր շրջապատի մյուս ժողովուրդներին, և գոյատևել՝ պահպանելով իր հավատը:

Կարապետ Ծախնազարյանի «Երկրագունդ» լրագիրը հրատարակվում էր 1860-ական թթ. կեսերից, Մանչեստրում: Այն անդրադառնում է իտալական ազատագրական շարժման միայն մի ժամանակահատվածին: 1864 թ. Ջ. Գաբրիելին իր երկու որդիների հետ ուղեվորվում է Անգլիա: Անգլիական հասարակայնության մի մասը ենթադրում էր, որ Գաբրիելի ուղևորության հիմնական նպատակը նշանավոր անգլիացի վիրաբույժից խորհուրդ հարցնելն էր: Մյուսները գտնում էին, որ դա ունի քաղաքական նպատակ, որ Գաբրիելին «... իր հայրենյաց միավորության և քաղաքականության համար հղացած խորհրդոց կատարման

²¹ «Մշակ», 1882, № 92:

²² «Մեղու Հայաստանին» մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, № 1, էջ 133—139:

²³ «Մեղու Հայաստանին», 1876, № 29:

²⁴ Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Եր., 1956, գ. 2, էջ 195:

համար ձեռնտվություն խնդրելու կզա»²⁵: Կ. Ժահնագարյանը, պաշտպանելով հայ ազգի միասնության համար մղվող պայքարը, նշավակում էր այն մեծահարուստներին, որոնք ոչնչով չեն ծանոթակել ազգի միասնության համար մղվող պայքարին: «Ժամանակ գալու է,— գրում էր նա,— որ անոնց ազգակործանական արարքն մանրամասն և հակաճան հանվան գրեթե ի՛նչ հալածանք, ի՛նչ աքսոր, ի՛նչ զրկանք, ի՛նչ անիրավություն, ի՛նչ բռնավորություն, ի՛նչ քսություն, ի՛նչ բանաարկություն... քրին մեր ազգի միաքանության և և շահուն դեմ»²⁶:

Գարրիել Պատկանյանը (1802—1889) խանդավառվել է իտալական ազատագրական շարժումներով և «Հյուսիս» լրագրում տպված իր գովածքներում տեղ տվել այդ շարժմանը: Ի՛նչ հարցեր էր հետաքրքրում նրան: 1862 թ. Կոստրոմայում՝ արտորավայրում գրած մի անավարտ հոդվածում ներկայացնում էր Գարիբալդուն և գնահատում այդ շարժումը այսպես. «Եվրոպայի մեջ կարծեմ,— գրում էր նա,— Գարիբալդին վերջինը լինի, որ բռնությանը ազատեց յուր հայրենիքը»²⁷:

Գ. Պատկանյանի հայացքները այդ շարժման մասին ավելի պարզորոշ երևում են «Հայոց ազգի նպատակը ի՛նչ է» հոդվածում, ուր նույնպես խոսելով հայ ազգի նպատակի մասին՝ գրում է և Գարիբալդիի մասին: Գ. Պատկանյանի համոզմամբ, յուրաքանչյուր մարդ ունի անձնական կամ համընդհանուր-ազգային նպատակ: Այսպիսով, մեկին գրավում է անձնական նպատակը, իսկ մի ուրիշին՝ հասարակականը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի նպատակը: Այդպիսին էր Գարիբալդին Իտալիայի համար, երբ նա հրաժարվեց անձնականից և սկսեց ապրել «ազգային նպատակի»՝ հասարակության համար: «Իտալիան էլ ունի յուր համար մեկ նպատակ,— գրում էր նա,— և Գարիբալդին ձկտվում էր դեպի նույն նպատակները, բայց թե Գարիբալդին յուր գործերու մեջ երևում է ավելի հայտնի, մյուս կողմը քանի միլիոն իտալացիք են մնում, որ թեպետ դեպի նույն նպատակներուն են դիմում, բայց ոչ Գարիբալդիի նման ակներև և թեպետ ամենեցուն կամ շատերի նպատակը նույն է և ամենեքյան կամ թե շատերը՝ մեկ են դրել իրանց առջևները՝ բայց գուցե բռնած ճամփաները են երբեմն զանազան»²⁸:

Այսպիսով, հայ ազգային պահպանողականներ Կ. Ժահնագարյանը, Գ. Պատկանյանը աշխատում էին դասեր քաղել իտալական շարժումներից և դրանով լուսավորել իրենց ժողովրդին:

Ինչպես տեսանք, հայ գործիչները ժամանակին առաջ էին քաշում իտալական ազգային-ազատագրական շարժումների հարցը և նրանցից որոշակի դասեր քաղելով, աշխատում էին պահպանել հայոց լեզուն, ազգային դպրոցը, ժողովրդին լուսավորել ու ազատագրել բռնության կապանքներից:

Г. А. АСМАРЯН—Итальянские национально-освободительные движения и их уроки. (вторая половина XIX века).—Итальянские национально-освободительные движения, осуществившие заветные политические мечты итальянского народа, воодушевляли армянских политических деятелей: по примеру Джузеппе Мадзини и Джузеппе Гарибальди они старались поднять армянский народ против турецкой тирании, под игом которой страдали западные армяне. Микаэл Налбандян был очевидцем итальянской национально-освободительной борьбы, восторженно писал об этом своему коллеге—Арутюну Свачяну. Налбандяну вторили его западноармянские соратники—Степан Восканян, Арутюн Свачян, Серовбэ Тагворян, Григор Чилинкиряп, Маттаос Мамурия, Армелак Айкуни и др.

Степанос Назарян в «Ювсвапайле», Григор Арируни в «Мшаке» печатали материалы об итальянских движениях, давая им высокую оценку. В 50—80-ые годы XIX века армянские национальные консерваторы—редактор «Меру Айастан» Петрос Симолян, Габриэл Паткянян, Карапет Шахназарян, Карапет Езян и другие старались извлечь уроки из итальянских освободительных движений, отстаивая единство армянского народа, стараясь сохранить национальную школу, просветить народ.

²⁵ «Երկրագունդ», 1864, № 4:

²⁶ Նույն տեղում, 1864, № 15:

²⁷ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. 2, էջ 67:

²⁸ «Հյուսիս» լրագիր, 1868, № 6, էջ 45: